## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2025 թվականի N 566-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ 05-005-0133-0015 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.14925 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ՎԱՀԱՆԻ, ԳՐԵԶԵՆԴԱ ՏԻԿՈՒՇԻ ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՇՈՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի ղեկավարի 18.04.2021թ. թիվ 75-Ն հրամանով, հիմք ընդունելով Աշոտ Վահանի Խաչատրյանի դիմումը (անձ. AT 0550759 ծնված 12.03.1953թ), որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0,14925 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Գ. Նժդեհի փողոցի 05-005-0133-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Գ. Նժդեհի փողոց, 26 հասցե։

2. Սեփականատերերի կողմից փաստացի օգտագործվող 0,14925 հա տնամերձ հողամասը համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի գտնվում է սեփականատերերին հատկացված 0,13 հա տնամերձ հողամասի 20%-ի սահմաններում՝ ճանաչվում է Աշոտ Վահանի (ծնված 12.03.1953 թ), Գրեզենդա Տիկուշի (ծնված 30.05.1956 թ) և Խաչատուր Աշոտի (ծնված 23.09.1984 թ) Խաչատրյանների սեփականություն, իսկ ավել զբաղեցրած 0,03186 հա հողամասը՝ որպես համայնքային սեփականություն։

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից։

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 16

ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 սեպտեմբերի 2025 թվականի N 567-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-065-0018-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Գրիգորի Գաբրիելյան դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի 6-րդ փողոցի 05-065-0018-0007 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Մեծ Մասրիկ բնակավայր, 6-րդ փողոց, 33 բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 16
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 սեպտեմբերի 2025 թվականի N 568-Ա

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ որոշում եմ.

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | Պայմանագրի | | | | Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/ | | | Պատվիրատուի անվանումը | Պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը հրապարակելու ամսաթիվը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծածկագիրը | Ծածկագիրը | Չափաբաժնի համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | | | | |
| 1 | | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 9 | | 10 | 11 |
| ՀՀԳՄ | ՀՀԳ | 1, 3 | ՀՀ | 1011638 | «Ավե | 042 | ՀՀ, | Վարդեն | 09.09. | Պայմանագ | Առկա չէ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՎՀ-ԳՀԱՇ ՁԲ-24/20 | ՄՎՀ-ԳՀԱ ՇՁԲ-24/20-1 | | Գեղարքունիքի մարզի սուբվենցիոն ծրագրերով նախատեսված Վարդենիս քաղաքի 10 հատ բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքներ. Հ.Արզոյան 2 և Հ.Արզոյան 9, Լեռնագործների 1/1 և Խ.Ստեփանյան 9 հասցեներում գտնվող շենքեր | 50 | տիս-խեցի» ՍՊԸ | 15828 | Արարատի մարզ, գ.Բերքանուշ | իսի համայնքապետարան | 2025թ. | րի 3.1.4. կետի ա) ենթակետ /Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար/ : | |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 16
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 569-Ա

## ՍԻՄՈՆ ՀԱՅԿԱՐԱՄԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 15/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-005-0173-0099 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,00159 ՀԱ ԵՎ 05-005-0173-0083 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0045 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 09 -ի N 125-Ա որոշումը և Սիմոն Գրիգորյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Սիմոն Հայկարամի Գրիգորյանի սեփականություն հանդիսացող հողամասին կից <<բնակավայրերի՝ հասարակական կառուցապատման>> 05-005-0173-0099 ծածկագրով 0.00159 հա և 05-005-0173-0083 ծածկագրով 0.0045 հա հողամասերը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02072025-05-0016 և 03072025-05-0010 վկայականներ, տրված համապատասխանաբար՝ 02.07.2025 և 03.07.2025 թվականներին) ընդլայնման նպատակով՝ ուղղակի վաճառքով օտարել Վարդենիս քաղաքի բնակիչ Սիմոն Հայկարամի Գրիգորյանին:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ուղղակի վաճառքով օտարվող 0,0045 հա և 0,0159 հա հողամասերի 1 քմ-ի կադաստրային արժեքը (13-րդ գոտի)՝ կազմում է 1877,7 դրամ 15,9x1877,7=29860 (քսանինը հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ և 45x1877,7=84500 (ութանասունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 19
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 570-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 05-005-0098-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0144 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 30-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշման կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 11-ի N 2-7 եզրակացությունը, Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի գլխավոր հատակագիծը և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի 05-005-0098-0002 կադաստրային ծածկագրով 0,0144 հա հողամասը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

2. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի 05-005-0098-0002 կադաստրային ծածկագրով 0,0144 հա հողամասի նշանակությունը <<այլ հողեր>> հողատեսքից փոփոխել բնակավայրերի, որպես՝ <<բնակելի կառուցապատում>>:

3. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի, Խ. Ստեփանյան փողոցի 05-005-0098-0002 կադաստրային ծածկագրով 0,0144 հա հողամասին տրամադրել Խ. Ստեփանյան փողոց, 40 հողամաս:

4. Կատարել իրավունքի պետական գրանցում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 19
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 571-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՊՐԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-007-0124-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0375 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19 հունվարի 2006 թվականի N 133-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ Վարդենիս համայնքի Ախպրաձոր բնակավայրի 05-007-0124-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0,0375 հա արոտավայրը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

2. Կատարել իրավունքի պետական գրանցում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 19
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 572-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1 ՀԱՍՑԵԻ 05-008-0157-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,11 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 10.06.2008թ. <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության 27.04.2010թ. ՀՕ-50-ն օրենքի դրույթներով, 26.12.2002թ. ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի ղեկավարի 18.04.2021թ. թիվ 75-Ն հրամանով և հիմք ընդունելով Նիկոլա Մաթոսի Պետրոսյանի դիմումը (ծնված՝ 01.01.1933թ.), 01.07.2025 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ ժառանգական գործ՝ 198, որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը և այն հանգամանքը, որ բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,11 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝**որոշում եմ.**

1. Սիրանուշ Արեստի Անանյանի ժառանգորդ՝ Նիկոլա Մաթոսի Պետրոսյանին (ծնված՝ 01.01.1933թ.), և համասեփականատերեր՝ Էմմա Նիկոլայի Պետրոսյանին (ծնված՝ 04.10.1978թ.) և Մայիս Նիկոլայի Պետրոսյանին (ծնված՝ 29.04.1980թ.) պատկանող Ակունք բնակավայր, Գ. Խաչատրյան փողոց 1/1 հասցեում գտնվող հողամասում 1970 թվականին կառուցված բնակելի տուն՝ 22,70 քմ, 101.00 քմ, բաց պատշգամբ՝ 21.80 քմ, անասնաշենք՝ 14.10 քմ, 37.40 քմ, 1965 թվականին կառուցված հացատուն՝ 28,70 քմ և 1975 թվականին կառուցված խորդանոց՝ 14.30 քմ, մառան՝ 5,80 քմ և կաթսայատուն՝ 4.90 քմ մակերեսով շինությունները ճանաչել օրինական, որպես Նիկոլա Մաթոսի Պետրոսյանի, Էմմա Նիկոլայի Պետրոսյանի և Մայիս Նիկոլայի Պետրոսյանի սեփականություն:

2. Սեփականատերերի կողմից փաստացի օգտագործվող Ակունք բնակավայր, Գ. Խաչատրյան փողոց 1/1 հասցեի (ծածկագիր՝ 05-008-0157-0008) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,11 հա հողամասը համաձայն 26.12.2002թ. ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի ճանաչվել է նրանց սեփականություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 19

ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 573-Ա

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-055-0021-0025 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի՝ ՊՈԱԿ-ի ի դեմս տնօրենի՝ Նունե Ավետիսյանի դիմումը որոշում եմ՝

1.Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի 5-րդ փողոցի՝ 05-055-0021-0025 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Կարճաղբյուր բնակավայր 5-րդ փողոց 18 դպրոց:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 19
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 574-Ա

### <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 2-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Կարապետյանի 17/09/2025 թվականի դիմում-հայտը **որոշում եմ**

1.Թույլատրել <<ԻՄԻՋ Մ. Գ.>> ՍՊԸ-ին Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի 1/2 հասցեում, հանրախանութի մոտ գտնվող գովազդային վահանակի վրա B կողմում 18 ք/մ մակերեսով տեղադրել սոցիալական գովազդ 19/09/2025 թվականից մինչև 31/12/2025 թվականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 19
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 575-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՌԱՄՍՅԱ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26 . 03 . 2020թ . թիվ 02-Ն հրամանով հաստատված <<Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգի>> 21-րդ կետի դրույթները՝ **որոշում եմ.**

1.2025 թվականի նոյեմբերի 28-ին ժամը 11:00-ին հայտարարել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու նոր մրցույթ:

2.Մրցույթի մասին հայտարարությամբ հանդես գալ զանգվածային տեղեկատվության միջոցով, ինչպես նաև http:/www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 19
ք. Վարդենիս